# ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Կյանքի Բուժող Ընտրությունները
Մաս 6

*«Երանի ողորմածներին որ նրանք ողորմություն կգտնեն:»* Մատթ 5:7

*«Երանի խաղաղություն անողներին,*
*որ նրանք Աստծո որդիք կկոչվեն:»* Մատթեոս 5:9

**Քայլ 6- Քննեմ իմ հարաբերությունները. Ներեմ բոլոր նրանց որոնք ինձ վիրավորել են և փոխարինեմ բոլոր վնասները որ ուրիշներին տվել եմ, այն պայմանով որ մեկին չվնասեմ.**

*«Արմատախիլ արեք ձեզանից ամեն դառնություն, բարկություն և զայրույթ...Միմյանց հանդեպ քաղցր ու գթած եղեք ներելով միմյանց, ինչպես և Աստված ներեց մեզ Քրիստոսի միջոցով»* եփեսացիս 4:31-32

<u>*ՄԱՍ 1-*. Ներեմ բոլոր նրանց որոնք ինձ վիրավորել են</u>

***Ի՞նչու***

***1- Որովհետև Աստված ինձ ներել է***

*«Միմյանց հանդեպ եղեք հանդուրժող ... Ինչպես Աստված Քրիստոսի միջոցով ներեց ձեզ, այնպես էլ դուք ներեցեք միմյանց:» Կող. 3:13*

***2- Որովհետև ոխ պահելը անօգուտ է***

*«Իրավ հիմարին սպանում է բարկությունը:»* Յոբ 5:2

*«Ով իր անձն իրան բարկությունովը պատառող…»* Յոբ 18:4

*«Մեկը մեռնում է բոլորովին հանդարտ և հանգիստ: Իսկ մյուսն մեռնում է դառն հոգով և բարիք չի ճաշակել:»* Յոբ 21:23-25

***3- Որովհետև ապագայում կարիք կունենամ ներվելու***

*«Երբ աղոթեք եթե մի բան ունեք մեկի հանդեպ ներեցեք, որպեսզի ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ ների ձեր հանցանքները»* Մարկոս 11:25

***Ի՞նչպես***

1- Հայտնեմ իմ վիրավորանքները

*Մի ցանկ պատրաստեմ այն մարդկանցից որ ինձ ցավ են պատճառել իրենց խոսքերով, վարքերով կամ մտքով.*

2- Ազատվեմ իմ վիրավորողներից

*«Տեր, եթե եղբայրս մեղանչի իմ դեմ, քանի՞ անգամ պետք է ներեմ դրան…Հիսուսը պատասխանեց նրան, ոչ թե յոթ անգամ, այլ յոթանասուն անգամ յոթ:»* Մատթեոս 18:21-22

**«Դատարկ աթոռ» Տեխնիկան**

**3- Տեղափոխեմ իմ վիրավորանքը Աստծո խաղաղության հետ**

*«Ձեր սրտերումը թող թագավորի Քրիստոսի խաղաղությունը»* Կող. 3:15

<u>***ՄԱՍ 2- փոխարինեմ բոլոր վնասները որ ուրիշներին տվել եմ***</u>

*«Ուշադիր հսկեցեք, որ որևե մեկը չզրկվի Աստծու շնորհքից: Չլինի թե մեկը դառնության արմատ դառնալով, պատճառ լինի խռովության, և շատերը վարակվեն նրանից:»* Եբրայեցիս 12:15

**Ի՞նչպես**

**1- Ցանկ պատրաստեմ նրանցից ում վիրավորել եմ**

*Չվճարած պարտք, չկատարած խոստում, չափից վեր վերահսկել, չափից վեր տիրակալել, չափից վեր քննադատել, վիրավորել խոսքերով, ծեծել, ճնշել, մոռանալ, դավաճանել, սուտ խոսել.*

**2- Մտածեմ թե կուզենայի մարդիք ինչպես ինձ փոխարինեին**

*«Ինչ որ ուզում եք որ մարդիք անեն ձեզ, դուք էլ նույնը արեք նրանց:»* Ղուկաս 6:31

**- Ճիշտ ժամանակ**

*«Ամեն ձեռնարկության համար կա ժամանակ և իրավունք»* Ժող. 8:6

**- Ճիշտ մոտեցում**

*«Ապրենք ճշմարտության համաձայն...» Եփեսացիս 4:15*

**- Արդյո՞ք հարմար է**

*«Շատախոս է լինում որ սուրի պես խոցոտում է. բայց իմաստունների լեզուն բժշկություն է:»* Առակաց 12:18

*«Ինչքան կարող եք բոլորի հետ խաղաղ ապրեցեք:»* Հռոմեացիս 12:18

**3- Վերակենտրոնանամ իմ կյանքի վրա**

*«Եթե դու ուղղես քո սիրտը և ձեռքերդ դեպի նրան տարածես ... Ահա այն ժամանակ կբարձրացնես երեսդ անարատ և հաստատ կլինես և չես վախենա: Որովհետև թշվառությունը կմոռանաս, անցած ջրերի պես միտքդ կգա:»* Յոբ 11:13-16

Հաջորդ Կիրակի:

ԱՃՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Կյանքի Բուժող Ընտրությունները

Հովիվ Սարօ Խաչիկեան